Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Ավշարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության (4 դասաժամ), ինֆորմատիկայի (11) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստու- գումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝ 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ ՝ նշելով այն աշխատատեղը, որին հա- վակնում է (Ձեւ 1), 2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ ‹‹Հանրակրթության մասին›› ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ, 3. Անձնագրի պատճենը, 4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4), 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկա- յացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատ- ճենները (դրանց առկայության դեպքում), 6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի, 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխա- տելու իրավունք, 8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ մարտի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժա- մը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա մարտի 5-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Ավշարի միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 93-93-31 հեռախոսահամարով: